Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «*Գեղանիստի միջնակարգ դպրոց*» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (15 դասաժամ) եւ ֆիզկուլտուրայի (14 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- *դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*
- *բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*
- *անձը հաստատող փաստաթուղթ,*
- *«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*
- *ինքնակենսագրություն (Ձեւ 5),*
- *այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*
- *ՀՀ արական սեռի քաղաքացիները նաեւ զինվորական գրքույկ,*
- *հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*
- *որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***հոկտեմբերի 27-ից մինչեւ նոյեմբերի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 11-ին՝ ժամը 14:00-ին,*** Արարատի մարզի Գեղանիստի միջնակարգ դպրոցում, հասցեն գ. Գեղանիստ 21/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 46-90-99 հեռախոսահամարով: